մասին... Եթէ սուլթանը յապաղի այսուհետև էլ, չատ հաւանական է, որ Թիւրքական ջրերը ուղարկուին ամերիկական զրահակիրները, ինչպէս այդ եղաւ երկու տարի առաջ...

Լ. Ս.

26 մարտի.

—Կ. Պոլսի հայոց թերթերը հաղորդում են, որ Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոսը մարտի 5-ին հասել է Ադանա մեծ չքով. Թիւրքաց կառավարութեան կողմից Սահակ սրբազանին արտակարգ պատիւները են ցոյց տրուել։

Բերլինից խմբագրութիւնս ստացաւ հետևեալ գրութիւնը.

Պատիւ ունինք Ձեզ խոնարհաբար տեղեկացնելու, որ մենք դիտաւորութիւն ունինք 1903 թ. աշնանը Բերլինում մի Հայկական Ցուցահանդէս կազմելու։

Մեր ձեռնարկութեան նպատակը որևէ քաղաքական հիմունքից միանգամայն զուրկ է։ Մենք կամինք Գերմանիոյ մայրաքաղաքում հայ ազգի անցեալ և ներկայ կուլտուրան, նորա նիւթական և հոգևոր արդասեաց ընդհանուր պատկերը գերմանական հասարակութեանն ներկայացնել։ Մեր ցանկութիւնն է՝ դրդել գերմանական գիտութիւնն աւելի մեծ աջողութեամբ, քան մինչև այժմ, ուսումնասիրել հայ լեզուն և պատմութիւնն և աւելի պարզ պատկերացնել մեզ հայ ազգութիւնն։ Ձեր աղդութեանն խաղաղ կերպով ծառայել՝ այսինքն՝ Հայաստանի և Հայերի մասին լոկ ճշմարտութիւն հանդէս դնել՝ մեր միակ ցանկութիւնն է։ Թէ Ձեր ազգը մի խաղաղ, հոգևորապէս զարգացած և վերին աստիճանի կուլտուրայի ընդունակ ժողովուրդ է՝ յօգուտ դորա գերմանացի և եւրոպական հասարակութեան առջև համոզեցուցիչ ապացոյցներ են բերելու նորա աշխատանքի պտուղները և նորա հոգևոր կեանքի արդասիքը, հայ պատմութեան սկզբից մինչև մեր ներկան։

Ցուցահանդիսի ծրագիրը հետևեալ բաժանմունքներից կը բաղկանայ՝

I. Շրկրի ըերքը.

ա) Հանքեր և մետաղներ. բ) Նաֆտայ. գ) Բամբակ. դ) Բուրդ. ե) Մետաքս. զ) Գինի և այլ խմիչք. է) Զոր միրգ. ը) Կաթնային անտեսութիւն. թ) Ձկնեղէն։

II Արուեստ եւ ձեռագործ.

ա) Գեղակար. բ) Ոստայնանկութիւն (կապերտներ և այլն). գ) Ոսկերչութիւն։

III. Հին եւ նոր հայկական գեղարուեստ.

ա) Ճարտարապետութիւն և արձանագրութիւն. բ) Մոզաիկ. գ) Նկարչութիւն։

IV. Ազգագրութիւն.

ա) Ժողովրդի կեանքը, գործունէութիւնն, բնակարանն. բ) Զգեստը. գ) Հոգևոր կեանքը՝ հեքեաթներ, վէպեր, երգեր եայլն։

V. Հայ հնութիւններ.

ա) Դրամներ. բ) Կնիքներ և այլն։

VI. Գրականութիւն եւ մամուլ: VII. Հայկական թատրոն (բեմի վրայ):

Դիտաւորութիւն կայ Ցուցահանդիսի ժամանակ մի շարք դասախօսութիւններ Հայերի մասին կարդալու, որի համար հրաւիրելու ենք յայտնի գիտնականներ և ուսումնասէր ճանապարհորդներ. մեր ձեռնարկութիւնն ստուար հասարակութեան համար հետաքրքրական պէտք է անենք լուսաւոր պատկերներ և լուսանկարներ ցոյց տալով։ Ցոյս ունինք, Մեծապատիւ Պարոն, որ Դուք պատրաստ կը լինիք մեր այս ձեռնարկութեանն օգնելու և թէ մենք Ձեր օժանդակութեան շնորհիւ մեր ծրագիրը իրագործել կը կարողանանք։

Դրամը փոխադրելու է՝ Berlin, Deutsche Bank (Behrenstrasse), Herrn Dr. P. Rohrbach und Cand. B. Chalatianz.

Իսկ նամակների և այլն՝ Cand. B. Chalatianz und Dr. F. Finck, Berlin. Kantstrasse, 94.

Հայ թերթերում պարբերաբար հաշիւ ենք ներկայացնելու։

Ի նուէր կ'ընդունուին մեր ծրագրում յիշուած բոլոր առարկաները։

Խորին յարգանօք

Կոմիտէ

Դր. Փ. Անդրէաս
Իրանագէտ։

Դր. Լեպսիուս
Deutsche Orient-Missionի Դիրեկտոր։

Պրոֆ. Ռ. Պիշել
Սանսկրիտագէտ։

Պրոֆ. Եդ. Մայեր
Պատմաբան։

Նախագահ՝
Դր. Պ. Ռօրբախ

Պրոֆ. Կ. Գելդներ
Աւեստագէտ։

Դր. Ռ. Լեսվենֆելդ
Schiller-Թատրոնի Դիրեկտոր։

Պրոֆ. Ֆ. Ռեոդիգեր
Ազգագրական Ընկ. նախագահ.

Դր. Ն. Փինկ.
Լեզուագէտ և հայագէտ։

Քարտուղար՝
Բ. Խալաթեանց